



1. Եթե կյանքի մրրկից հոգիդ ընկճված,
Հոռի ամպերով է ճամփադ մթագնած,
Հիշիր Տիրոջ պարգևած ողորմությունն,
Պիտ հիանա՝ միտք բերելով սուրբ Արյուն:

Տիրոջ գութն ու բարիքներն հիշիր
Եվ դրանք ամենուրեք պատմիր,
Միտք բեր և տես՝ առատ Նա բաշխեց,
Կհիանաս, թե ինչպես Նա կատարեց:

2. Արդյո՞ք հոգսի բեռն է խեղճ հոգիդ ճնշում,
Ծանր վիճտն է դառնությամբ սիրտդ ճմլում,
Երբ հիշես Տիրոջ գութ, պիտ աչք բարձրացնես,
Կնետես կասկածներդ, գովեստ կերգես:

3. Տեսնես հարուստի երկրավոր բարիքներ,
Իսկույն հիշիր երկնքի քո մեծ գանձեր,
Տերը բոլոր կարիքներդ պիտ հոգա,
Ոսկուց շատ թանկ է, ինչ որ Նա քեզ կտա:

4. Քաջացիր հոգով, արդ Քրիստոսին Նայիր,
Նրա ուժով բոլոր վշտերդ ամոքիր,
Նրա ողորմությունը պահիր քո սրտում,
Կգտնես հանգիստ քո երկրավոր կյանքում: